

ՆՈՐԵԼՅԱՆ

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

Պարմական գիտությունների դոկտոր

ՊԱՐՈՒՅՐ ՄԱՄԱՐԵՒ ՄՈՒՐԱԴՅԱՆ

(Ծննդյան 70-ամյակի առիթով)



Գիտության համար կարևոր են իր մշակների կյանքի ու գործի, անցած ուղու ամփոփումն ու գնահատումը, քանի որ յուրաքանչյուր վաստակած սպասավոր կրում է իր ապրած դարաշրջանի գիտության ճշմարիտ լույսը:

Լրացավ պարմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պարույր Մամբրեի Մուրադյանի ծննդյան 70 և գիտական գործունեության 45-ամյակները: Հայրենական հայագիտության այսօրվա ամենահայտնի անուններից է Պարույր Մուրադյանը: Նա ծնվել է Զավախքի Ղադո (հայ. Փապար) գյուղում, արհեստագործի ընտանիքում: Ավարտել է Ագավրեթի միջնակարգ դպրոցը և կարճ ժամանակով գրադարանավար աշխատել Տուրցխ գյուղում: Բազմազգ և տարբեր դավանությունների միջավայրում պարսկականության փառանքները և հայագիտական գործունեությունը:

յան տարիներին նա հավանաբար բազմիցս մտածել է ազգային մշակույթի և նրա տարրության խնդիրների մասին: Այս հարցերի մի նշանակալի մասն էլ պիտի դառնային Պարույր Մուրադյանի գիտնականի հետազոտությունների առարկան:

1953 թ. մեր հոբելյարը ընդունվել է ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի պարսկական բաժին և իբրև Հր. Աճառյանի անվան թոշակառու՝ ավարտել Մայր ԲՈՒՀ-ը: Զավախքի որդու գիտական ուղին սկիզբ է առել 1958 թվականից, իսկ կենսագրությունը կապված է հայագիտական այնպիսի նշանավոր կենտրոնների հետ, ինչպիսիք են Մաշտոցի անվան Մալաթյանի Պարսկական Համալսարանը, ՀՀ ԳԱԱ Գրականության և Արևելագիտության ինստիտուտները, ուր նա մտնեմագետ-գրադարանավարից հասել է բաժնի վարիչի և գլխավոր մասնագետի պաշտոնների, պաշտպանել է թեկնածուական և դոկտորական ճիշտագիտություններ: Հայաստանի տարբեր հիմնարկների գիտական խորհուրդներում իր գիտելիքներն է սպասել է դրել միջնադարագիտության, հայագիտության և կովկասագիտության զարգացման գործին, իսկ իր գիտամանկավարժական վաստակի համար 1989 թ. արժանացել է Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակի:

Ի դարի 50-ական թթ. նոր կազմավորվող ՄԿ ԳԱ Ակադեմիան իր առջև խնդիր էր դրել Հայաստանում ավելի համակողմանի դարձնել հայագիտական հետազոտությունները: Խորհրդային Միության փառքեր քաղաքներում (հատկապես Լենինգրադում և Մոսկվայում) պարաստվում էին բանասեր, հնագետ ու պատմաբան մասնագետներ, որոնք հմտաւում էին Հայաստանի և հարևան երկրների պատմության հետազոտության խնդիրներում, փիրապետում օտար լեզուների, դառնում արևելագետ-միջնադարագետներ, բանասերներ ու պատմաբաններ: Նրանք էին, որ Ի դարի երկրորդ կեսին զարկ րվեցին դասական հայագիտության զարգացմանը հայրենիքում և մասնավորապես Երևանում, ՄԿ ԳԱ րարքեր ինստիտուտներում և ԲՈՒՀ-երում ստեղծեցին գիտական նորանոր կենտրոններ:

1958/9 թթ., Հայաստանի հայագիտության ժամանակի առաջարարներ Մուրեն Երեմյանի և Լևոն Խաչիկյանի քաջալերմամբ, հայագիտության ասպարեզում իր առաջին քայլերը կատարող երիտասարդ Պարույր Մուրադյանն ընդունվում է ՄԿ ԳԱ Գրականության ինստիտուտի ասպիրանտուրա և սկսում մասնագիտանալ վրաց դասական բանասիրության բնագավառում: 1960-1962 թթ. ասպիրանտական ուսումնառությունն անցկացնելով Թբիլիսիի պետական համալսարանի պրոֆեսոր, ՎՄ ԳԱ ակադեմիկոս Կոռնելի Կեկելիձեի ղեկավարության ներքո, Պարույր Մուրադյանը Թբիլիսիում ի մոտո շփվում է վրաց մրավորականության և վրացագիտական դպրոցների հետ, ծանոթանում դասական բանասիրության վրացական դպրոցի գործունեությանն ու ձեռագրին: Մրացած վրացագիտական հիմնավոր կրթությունը Պ. Մուրադյանը հետագայում լայնորեն օգտագործեց հայագիտական հետազոտություններում՝ նոր ու թարմ երակ բերելով հայ միջնադարագիտության անդաստան:

Առաջնորդվելով հայագիտության և կովկասագիտության լավագույն ավանդույթներով, Պարույր Մուրադյանը Նիկողայոս Մառից և Լ. Մելիքսեթ-Բեկից հետո նոր թափով ձեռնամուխ եղավ վրացագիտական հետազոտությունների խորացմանը՝ 1963 թ. Թբիլիսիում պաշտպանելով թեկնածուական ավարտաճառ: Պաշտպանությունից առաջ և հետո լույս տեսած հոդվածների հրապարակումն իսկ վկայում է, թե որքան լայն է հայագետ-կովկասագետի հետաքրքրությունների շրջանակը: Ներագա հետազոտություններում էլ ավելի ընդլայնվեց գիտնականի հետազոտությունների սահմանը:

Պ. Մուրադյանն իր ուժերը փորձելով հայ-վրացական գրական կապերի բնագավառում, իր նպաստն է բերում սայաթնովագիտության, ռուսթավելիագիտության և ագաթանգեղագիտության հսկա շրեմարանին, ուժերը փորձում հայ և վրաց վիմագրության ասպարեզում, քննության նյութ դարձնում միջնադարյան ճարտարապետության և մշակույթի հիմնահարցերը, շարունակում կովկասյան Եկեղեցիների միության և քաղկեդոնական հայերի խնդրի վերաբերյալ պահպանված միջնադարյան սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը, ձեռագրագիտության խնդիրների արծարծումը:

Նրա հետազոտությունների ոլորտը ներառում է ողջ միջնադարը, որը սկսնակ հետազոտողի համար կարող է դառնալ Կովկասի ժողովուրդների այսօրվա մշակույթն ու պատմությունը հասկանալու իսկական ոսկե բանալի: Հայագետ-վրացագետի աշխատությունները լույս են տեսել հայերեն, ռուսերեն, վրացերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և թուրքերեն: Նրա վաստակը, մանավանդ վերջերս հրատարակված իր մատենագիտություն-

նից հետո, դարձել է հայագիտության այսօրվա սերնդի սեփականությունը՝ ուսումնասիրության նոր հորիզոններ բացելով երիտասարդության առջև:

Պ. Մուրադյանի անսպառ գիտական եռանդի մասին են խոսում նրա հրապարակված 277 հետազոտությունները (շուրջ 10 մենագրություն): Գիտական ուսումնասիրություններին զուգահեռ, նա հեղինակ է եղել նաև հայագիտության նոր սերնդի պատրաստմանը, խմբագրել նրանց կողմից հայագիտության դասին հանձնված բազմաթիվ աշխատություններ: Նա անհանդուրժող կեցվածք է ընդունել գիտություն թափանցած պղպոր հոսանքների նկատմամբ, բարձր պահել կովկասագետ-հայագետի կոչումը:

1966 թ. Պ. Մուրադյանը հրապարակեց «Հայ-վրացական գրական կապերը ԺԸ դարում» ռուսերեն մենագրությունը: Այսօրեղ հեղինակը բացահայտեց ԺԸ դարի վրացական լուսավորական շարժման զարգացման հիմնական ուղղությունները, նոր ուղիներ բացեց հայ-վրացական մշակութային կապերի, երկու ժողովուրդների մադենագրական առնչությունների ուսումնասիրության բնագավառում:

Այնուհետև հաջորդեցին հետազոտությունների բազմաթիվ շարքեր՝ նվիրված հայ-վրացական բառարանագրության պատմությանը, Շոթա Ռուսթավելու «Ընձննավորին», Հայաստանի և Վրաստանի ԺԲ-ԺԳ դդ. պատմության խնդիրներին, Կովկաս աշխարհի մշակութային ամբողջությանը, Տոմարական փարբեր համակարգերի հետազոտությանը և վարձագրության դեռևս չլուծված մի շարք խնդիրների լուսաբանմանը: Հեղինակի համար թե՛ վրաց և թե՛ հայ բանասիրության հարցերի մեկնաբանությունը ինքնանպատակ չէր: Անդրադառնալով հայ-վրաց գրական-մշակութային փոխհարաբերություններին, Պ. Մուրադյանը, հեղինակելով Նիկողայոս Մառի և նրա դպրոցի հետազոտական սկզբունքներին, մեծ փնտռել է հարկացրել Սուրբ Գրքի թարգմանության պատմությանը: Երկու ժողովուրդների մշակութային փոխհարաբերությունների հետազոտությունը Պ. Մուրադյանը խորացրեց՝ հեղինակելով այն դրույթին, ըստ որի հայ-վրացական եկեղեցական բաժանումից հետո էլ հայկական բնակչության մի սովոր գանգված հավատարիմ է մնացել Քաղկեդոնի ժողովին և իր դավանանքով հեռացել Հայ Եկեղեցուց: Այս միջավայրի մշակութային գործունեության բազմաթիվ խնդիրներ նա հողվածներում քննության նյութ է դարձրել՝ անդրադառնալով Գրիգոր Բակուրյանի «Մահմանքին», Եվթիմիոս Զիդաբենոսի «Panoplia dogmatike»-ին և Դավիթ Այուրոպադարի դարաշրջանի Տայքի գրական գործունեությանը: Այս խնդիրների ծիրում է գրնվում նաև դավանական հանդուրժողականության պրոբլեմը: Իր մի շարք հողվածներով ավելի խորացնելով Հ. Անասյանի հետազոտությունները, Պ. Մուրադյանը կարողացավ ի մի բերել Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու դարաշրջանի դավանական հանդուրժողականության պատկերը՝ կազմելով նաև Գոշի «Թղթի» գիտական բնագիրը: Հայագետները սպասում են, որ հարգարժան հորելյարը պիտի հրապարակի նաև այդ բնագրի աղբյուրագիտական քննությունը:

Պ. Մուրադյանն իր հետազոտություններով անդրադարձել է նաև հայ-վրացական վիճաբանության, հայկական հնագրության, բնագրագիտության հարցերին: Նա է ձեռնարկել Հայաստանում առկա վրացերեն և Վրաստանում հայերեն արձանագրությունների հավաքման ու հրապարակման աշխատանքները: Այս բնագավառում հեղինակը հետապնդել է երկու նպատակ. նախ՝ բացարձակ վրացական միջավայրում հայկական վիճագիր արձանա-

գրությունների գոյության փաստը, ապա՝ պատմա-աղբյուրագիտական խոր ուսումնասիրության միջոցով վեր հանել այդ վիճագիր արձանագրությունների ստեղծման պատմամշակութային միջավայրը: Այս առումով գիտության համար չափազանց կարևոր էին Պ. Մուրադյանի հետազոտությունները, որոնք նվիրված են Զվարիի, Պղնձահանքի, Արենի Սիոնի, Անիի, Թֆիլիսիի վիճագրական ժառանգությանն ու դրա մեկնաբանությանը:

Ներկելով Լևոն Մելիքսեթ-Բեկի աշխատանքային սկզբունքներին, Պարույր Մուրադյանը հարստացրեց հայ թարգմանական գրականությունը վրաց հին գրականությունից կապարված փոխադրություններով՝ իր ավանդը բերելով Շոթա Ռուսթավելու «Ընձնավորի» թարգմանության բնագավառում: Ներագայում նա ձեռնամուխ եղավ նաև «Վրաց ժամանակագրության» բնագրի հայացման գործին՝ այդ բնագրին կցելով չափազանց կարևոր ծանոթագրություններ, առանձին հետազոտության նյութ դարձնելով ԺԲ դարի վերջի Վրաստանի և Հայաստանի պատմության ժամանակագրության հարցերը: Այս աշխատանքն իր պարզավոր տեղն ունի Լ. Մելիքսեթ-Բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» եռհատորյակի և ՏՏ ԳԱՄ-ի հրատարակած «Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին» բազմահատոր շարքի կողքին:

Պարույր Մուրադյանը շրջանառության մեջ է դրել նաև Ագաթանգեղոսի Պատմության և Շուշանիկի վարքի միջնադարյան վրացերեն խմբագրությունները, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, անդրադարձել է «Պատմութիւն Պղնձե քաղաքի» միջնադարյան գրույցի հայերեն և վրացերեն տարբերակներին, վրաց մատենագրության և ուղեգիրների հայաբնակ տարբեր շրջանների վերաբերյալ հաղորդած վկայություններին:

Պ. Մուրադյանն իր հետաքրքրությունների ոլորտում է միշտ պահել հայ-վրացական բանասիրության մասյան սկզբունքների վերաբարձումը, անդրադարձել է մինչև Է դարը հայ-վրացական եկեղեցական փոխհարաբերություններին՝ գիտական բանավեճի մեջ ապացուցելով Զվարիի Ս. Խաչ եկեղեցու հայերեն արձանագրության և Աբրահամ Գ. Աղբաթանեցի Կաթողիկոսի Թ-թի հավաստիությունը: Ներագույնելով միջնադարում հայցական հոլովածնի օգտագործման փաստերը տեղանուններում, եկել է այն համոզման, որ վրացերենը հաճախ պահպանել է հայկական այդ հոլովածնը ուղղականում (անվանական):

Ներագույնելով հետաքրքրությունների կենտրոնում են եղել հայ միջնադարյան մատենագրության այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Ագաթանգեղոսի և Ղազար Փարպեցու Պատմությունները, Տոմարական բնագրերը, Մանասիկի քյոթուկը և բազմաթիվ այլ հուշարձաններ: Պ. Մուրադյանն անդրադարձել է նաև վարքերի ուսումնասիրության խնդիրներին: Նիշարժան են նրա հետազոտությունները՝ նվիրված Ս. Թևոդորոս Զորավարի, Շուշանիկի, Դավթի ու Տիրիջանի, Ս. Նիկողայոս Սբանչելագործի վարքագրական հուշարձաններին:

Իր կյանքի ընթացքում Պարույր Մուրադյանը երկրասարդության մեջ սեր է սերմանել դեպի հայագիտության նվիրյալները՝ առանձին հոդվածներ նվիրելով Մարի Բրոսեին, Լևոն Մելիքսեթ-Բեկին, Հովսեփ Օրբելուն, Սուրեն Երեմյանին, Հակոբ Անասյանին, Ալակի Ծանիձեին, Լևոն Խաչիկյանին, Հայկ Պերպերյանին, Կոռնելի Կեկելիձեին, Մկրտիչ Ներսիսյանին, Գագիկ Սարգսյանին, Գևորգ Աբգարյանին, Հմանուել Պիվագյանին և մի շարք այլ հայագետների:

Պ. Մուրադյանը երկար փարիներ ուսումնասիրել է Ն. Մառի և Ն. Օրբելու արխիվները և այնպեղից լույս աշխարհ բերած բազմաթիվ նյութեր շրջանառության մեջ դրել: Վերջապես, նրա անմնացորդ նվիրվածության շնորհիվ հրապարակվեցին Նիկողայոս Մառի, Լևոն Խաչիկյանի ու Նովսեփ Օրբելու աշխատությունների հատորները: Պարույր Մուրադյանի անսահման աշխատասիրության արդյունք է նաև այն հսկայական խմբագրական աշխատանքը, որ նա կատարել է իբրև գիտության մի մեծ բնագավառի ղեկավար: Նրա խմբագրող գրչի ներքո են ձևավորվել «Ն. Մառը և հայագիտության հարցերը» (1968), «Նայագիտական հետազոտություններ, պր. Ա» (1974), «Շողակաթ» (1995), «Նայաստրանը և Քրիստոնյա Արևելքը» (2002) ժողովածուները, հրապարակվել Վ. Բոդյանի, Ն. Մարգարյանի, Պ. Չոբանյանի, Ս. Ավագյանի, Ա. Կոզմյանի, Ա. Նակոբյանի, Ա. Բոգոյանի և այլոց աշխատությունները: Պարույր Մուրադյանը նաև մեզանում ընթերցող հեղինակ է, որը բազմիցս հայագիտության հարցերին է անդրադարձել՝ գրախոսելով այս կամ այն նոր լույս տեսած մենագրությունը: Նրա գրախոսություններն ունեն կառուցողական բնույթ:

Պարույր Մուրադյանը գիտության անսահմանորոն նվիրված գործիչ է: Առանձնապես բոլոր է եղել նրա գործունեությունը ՏՏ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում, ուր նա 1976 թ. կազմակերպել և վարել է Կովկասագիտության և բյուզանդագիտության բաժինը, որն այժմ անվանվում է Քրիստոնյա Արևելքի բաժին: Այն ժամանակ դեռևս նոր ձևավորվող Արևելագիտության ինստիտուտում, ակադեմիկոս Գագիկ Խորենի Սարգսյանի և մյուս բաժինների աշխատակիցների աջակցությամբ, ստեղծվեց մի բաժին, որը շուրջ 30 փարի փորձաքարի դեր է կատարում Նայաստրանի գիտական միջավայրում՝ միջնադարյան քրիստոնյա Արևելքը և Կովկասն ուսումնասիրելու իր հետևողականությամբ: Բաժնի գիտական հաջողությունների խոսափողն է եղել «Кавказ и Византия» (1979-1988) պարբերականը, որը Պարույր Մուրադյանի խմբագրությամբ դարձավ Խորհրդային Միության մեջ գիտաճյուղի առաջադարձ պարբերականներից մեկը: Այս հանդեսի բոլոր համարներն իրենց պատվավոր տեղն ունեն աշխարհի փարբեր ծագերի արևելագիտական, կովկասագիտական ու բյուզանդագիտական կենտրոնների գրադարաններում:

Մեր հոբելյարն իր գիտական գործունեության ընթացքում կարողացել է ստեղծել համախոհների ու աշակերտների մի սերունդ, որը բարձր է գնահատում նրա վաստակը և գործունեությունը: